

Գ. Ս. Մարդյան

«Ազատության գինը հավերժական զոհանությունն է»
(Թոմաս Մեյֆրո)

Պետության գործադիր, օրենսդիր, դատական մարմիններին հսկելու և նրանց կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ տեղեկատվության կարիք ունեն։ Եթե նրկրի քաղաքացիները տեղյակ չեն հասարակության և պետության միջև տեղի ունեցող գործընթացներին, ապա նրանք ի գործու չեն Լավա մասնակցություն ունենալ այդ գործերին։ Նրանք իրավունք ունեն ստանալ հասարակական հետաքրքրություն ներկայացնող կամ իրենց անձնական շահերը շոշափող, ինչպես նաև պետական մարմինների գործողությունների մասին տեղեկություններ. տեղեկանալ նախատեսվում է ընդունված օրենքներին, կառավարության և տեղական ինքնակառավարման որոշումներին, նախագահի հրամանագրերին։ Նման տեղեկությունների իմացությամբ քաղաքացիները կարող են հաճուք պատշաճի վերահսկողություն իրականացնել պետական իշխանության գործունեության վրա։ Պատահական չէ, որ մարդու իրավունքների միջազգային հասարակական կազմակերպություն «Արտիկլ 19»-ը տեղեկատվությունը բնութագրել է որպես «Ժողովրդավարության թափածին»։ Ժողովրդավարությունը և տեղեկատվության ազատությունը քայլում են համընթաց, և մեկը առանց մյուսի լինել չի կարող։

Տեղեկատվության ազատության ապահովումը չափազանց կարևոր է ժողովրդավարական հասարակության համար, երբ տեղեկատվության ազատության իրավունքը օրենսդրական գործնական կիրառություն է գտնում։ Այս խնդրի գործնական իրականացման համար առաջնային կարևորություն ունի տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքը ամրագրումը ինչպես նրկրի սահմանադրությամբ, այնպես էլ առանձին իրավական փաստաթղթերով։ Համաշխարհային մասշտաբով տեղեկատվության ազատության մասին առաջին իրավական ակտն ընդունվել է Շվեդիայում 1766թ.։ Եվ առհասարակ, տեղեկատվության ազատության իրավունքի գործնական իրականացումն ապահովող տեղեկատվության ազատության մասին օրենքներ գոյություն ունեն ավելի քան նրկու հարյուր տարի և դրանից միայն մի քանիսը քան տարուց ավելի կյանք ունեն։ 20-րդ դարավերջին և 21-րդ դարավերջին նկատվում է տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրական ակտի, որը հեղինակ է ամբողջ երկրագունդը։ Աշխարհի բոլոր տարածաշրջանների նրկրները ինտեգրվել են տեղեկատվության ազատության օրենսդրական քայլարշավին։ Մակայն տեղեկատվության ազատության դատական օրինակը ձևավորվել է Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագրում։ 1946թ. ՄԱԿ-ի որոշմամբ ընդունվել է հետևյալ պահանջը. «Տեղեկատվության ազատությունը մարդու իմանալու իրավունքներից է և մյուս բոլոր ազատությունների անկյունքաքարը։ Այն կենսական նշանակություն ունի աշխարհում խաղաղություն և առաջընթաց ապահովելու ցանկացած յուրյ փորձի համար։ Պետությունների միջև փոխըմբռնումը և համագործակցությունը անհնար է առանց արթուն և առողջ հասարակական կարծիքի։ Տեղեկատվության ազատությունը ներառում է անարգել կերպով ինֆորմացիա հավաքելու, փոխանցելու, հրապարակելու իրավունքը այլուր և ամենուր»։ Իսկ ահա ԱՄՆ-ի գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեն հետաքրքիր մեկնաբանություն է տվել. «Մի փոքր արևի յուրյ լավագույն ակտառնումն է»։ Սա է թերևս պատճառը, որ ԱՄՆ-ի որոշ նահանգներում տեղեկատվության ազատության օրենքները պարզապես անվանվում են արևի յուրյ օրենքներ։

* Աստղանիշով նշված բոլոր աշխատանքները զեկուցվել են «Երիտասարդ գիտնականների Ժողովրդագրություն»։ Մոնիանակներտ, ապրիլ, 2007թ.։

որովհետև այն թափանցում է իշխանական մուր միջանցքներ եւ կանխում կառավարության «սուր» գործողությունները:

Եվրոպական շատ պետություններ ընդօրինակել են տեղեկատվության ազատության փաստաթղթերի ներկայացված պայմանները, սկզբունքները եւ օգտագործել դրանք որպես ազգային օրենսդրական փաստաթղթերի հիմք: Որպես Եվրոխորհրդի անդամ պետություն Հայաստանի Հանրապետությունը խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքները ամրագրել է թե՛ Սահմանադրության մեջ եւ թե՛ առանձին իրավական ակտերում: Ժողովրդավարական գործընթացներից անմասն չի մնացել Լեւոնային Ղարաբաղը: 2001թ. ԼՂՀ Ազգային Ժողովը կիրառում է Եվրոպայի խորհրդի աջջնե ՀՀ ստանձնած պարտավորությունները: Չնայած արտաքին աշխարհը դեռեւս չի ճանաչում ԼՂՀ-ի անկախությունը եւ որպես առանձին պետության գոյությունը, այնուամենայնիվ արգելադրում է իշխանությունները եւ հասարակայնությունը գիտակցել են, որ անհրաժեշտ է խնամել ժողովրդավարական արժեքներին ու քաղաքակրթության հետքերով առաջնորդվել: Այդ նպատակին հասնելու ամենազայտուն նվաճումը 2006թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ Սահմանադրության ընդունումն է, որի 27-րդ հոդվածի առաջին մասը լայն երաշխավորություն է տալիս տեղեկատվության ազատության իրավունքի շրջանակներում. «Յուրաքանչյուր որ ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք, այդ թվում՝ խոսքի ազատության իրավունք. ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փոխանցելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից...»: Այսօր արդեն ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու փոփոխություններ են կատարվում թե՛ քաղաքացիական եւ քրեական օրենսգրքերում, թե՛ ՁԼԲ օրենսդրական փաստաթղթերում: Թվում է որդեմեծի առաջընթաց կնկատվի ԼՂՀ օրենսդրության մեջ: (Սերբոիիշյալ վերլուծությունների մեջ մեր գիտաբլումները կատարել ենք մինչեւ 2007թ., քանի որ վերջնական տեսքի չեն բերվել ՁԼԲ գործունեությունը կարգավորող օրենքները):

Մինչեւ 2006թ. նոյեմբերը Լեւոնային Ղարաբաղում ընդունվել են ամենատարբեր քննազատման եւ վերաբերյալ բազմաթիվ օրենքներ: Այդ օրենքները կանոնակարգում են Ղարաբաղի քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Անցումային ժամանակաշրջանում զանվող հասարակությունում, որտեղ դեռ նոր են կառուցվում քաղաքացիական ինստիտուտները, յուրաքանչյուր օրենք կարող է շրջանցվել եւ այլ կերպ ընկալվել, ինչի արդյունքում վիճող կողմերը կարող են դժգոհ լինել միմյանցից: Նման իրավիճակ է տեղծվել ԼՂՀ-ում հետպատերազմյան տարիներին, երբ ռազմական դրության ռեժիմը բացասաբար է անդրադարձել քաղաքացիների իրավունքների մի շարք սահմանափակումների վրա: Երկրի բարձրագույն ղեկավարությունը քանիցս հայտարարել է, որ «Ռազմական դրության ռեժիմի մասին» ԼՂՀ օրենքի՝ մարդկանց հիմնարար իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ պարտադիր հոդվածների գործողությունները կպակասված են: Սակայն խնդիրը նրանում էր, որ այդ հայտարարությունները չլին ամրագրված կոնկրետ փաստաթղթով, ասել է թե՛ հիշյալ օրենքում համապատասխան փոփոխություններ չեն մտցվել: Համեմատելով դեպ, ԼՂՀ Ազգային Ժողովում դժվար էր հայտնաբերել համապատասխան փաստաթուղթ: Սա վտանգավոր էր այն խնստով, որ իրենց համար ցանկացած հարմար պահի իշխանությունները կարող են օգտվել իբր թե անորոշ հոդվածներում առկա սահմանափակումներից: Մի քանի տարի շարունակ Լեւոնային Ղարաբաղի լրագրողական հասարակայնությունը դիմել է իշխանություններին հետևյալ խնդրանքով՝ փաստաթղթում ամրագրել հիշյալ հոդվածներում գործողությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին որոշումը:

Ճիշեցնելով, որ 2002թ. սկսած արցախյան ՁԼԲ-ում շատ է խոսվել Լեւոնային Ղարաբաղում տեղեկատվության ստանալու հետ կապված հիմնական խնդիրների մասին: Հրատարակվել է փաստերի մասին, որ քաղաքացիների՝ պետական մարմիններին հղված հարցապնդումները եւ թողոքները մնացել են անպատասխան, որ մարդիկ պարզապես չգիտեն, որ պետական մարմիններից տեղեկություն ստանալը ոչ թե լրագրողի մենաշնորհն է, այլ ցանկացած քաղաքացու իրավունքը: Ստեփանակերտի մամուլի ակումբի ուսումնասիրությունները դրա վրա վկայությունն են: Սրանց հաջորդեցին հետևյալ դեպքերը: Ստեփանակերտի մամուլի ակումբը վկայել է մշակել «Տեղեկատվության ազատության մասին» օրենսգրքի, որը «Արտիկլ-19» միջազգային կազմակերպության հետ ձեռք է բերվել պայմանավորվածության համաձայն եւ նվերական փորձաքննություն է անցնելու: Ի դեպ, նշել, որ Լեւոնային Ղարաբաղում «Մտքի ազատության միջոցով ժողովրդավարության արմատավորումը Հարավային Կովկասում» նախագծի շրջանակներում «Արտիկլ 19» միջազգային կազմակերպությունը համագործակցում է

Ստեփանակերտի մամուլի ակումբի հետ և տեղեկատվության մատչելիության թեմայով Ազգային տարածքում կազմակերպում են սեմինարներ, բերնինգներ, հանրադրյալ, տալիս միջոցառումներ և լրագրողական ծրագրեր: Ընդ որում միջազգային կազմակերպության և միավորվելու և համագործակցելու անհրաժեշտությունը բավականին հրահրալ է պահանջարկը՝ ուսանելի: 2004թ. «Արտիկլ 19» միջազգային կազմակերպության և Ստեփանակերտի մամուլի ակումբը ԼՂՀ ղեկավարությանն է դիմել մի խնդրանքով՝ ընդունել օրենսդրական փաթեթում նախատեսվել ՏԱ օրենքը: Ի դեպ, այդ օրենսգրքի Լոռու միջազգային փորձագիտության է ենթարկվել: Փաստորեն օրենքի ընդունմամբ լրացվում է օրենսդրական դաշտը:

2004թ. հոկտեմբերին ԼՂՀ Ազգային ժողովը ընդունել է ՏԱ օրենքի նախագիծը և 2004 հունվարի 1-ից ուժի մեջ են մտել սույն օրենքի բոլոր հոդվածները: Օրենքի նախապատմության հայտնի է, որ օրինագծի նախածնունդային համար հիմք է հանդիսացել Մարդու հիմնարկ ազատությունների համակարգից բխող դրույթը, ըստ որի յուրաքանչյուր որ ունի տեղեկություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք և, միաժամանակ այն հանգամանքը, որ 2004 թ. սկսած՝ ԼՂՀ Ազգային ժողովն աշխատում էր Եվրոպայի խորհրդի աջակցությամբ կարտավորությունների շրջանակներում: Այդ առաջությամբ ԼՂՀ գործող օրենսդրության համապատասխանեցումը համաեվրոպական չափանիշների դարձել էր անհրաժեշտություն: Այդպիսի քաղաքական նպատակը մտնում էր նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման համատեքստ: Թվում է՝ օրենքի նախագիծը վարդգ պետք է շրջանառության մեջ դրվեր, սակայն գոտու տեխնիկական բնույթի հանգամանքները խոչընդոտել են այդ հարցի քննարկմանը:

Օրինագծի համար հիմք է ծառայել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված համապատասխան օրենքը, որը գործում է ՀՀ-ում 2003թ.: Նշենք, որ ՀՀ եւ ԼՂՀ պարագայում նմանությունը կայանում էր նրանում, որ երկու պետություններում օրենքի ընդունումը պայմանավորված էր ներքին պահանջով և իրական ժողովրդավարական կառավարության ստեղծելու անկախիթով: Հավաստի էր այն, որ ԼՂՀ օրենքում մարդու հիմնարկ ազատությունները սահմանափակվող որեւէ փոփոխություն չի նախատեսվել: ԼՂՀ Ազգային ժողովի լրատվության հանձնաժողովը ընթերցումով է վերաբերվել այդ խնդրին, մասնավորապես աշխատանքներ էին ընթանում հիմնական օրենքի մշակման ուղղությամբ:

«Հասարակությունն իրավունք ունի իմանալ՝ ինչ է և անում իր կառավարությունը, ինչպես և գործում պաշտոնյաները, և ինչպես են ծախսվում հարկերից ստացված գումարները: Որքան ազատ հասարակության քաղաքացիներ՝ մենք պարտավոր ենք հարցեր տալ կառավարությանը: ԼՂՀ Ազգային ժողովի լրատվության հանձնաժողովը ընթերցումով է վերաբերվել այդ խնդրին, մասնավորապես աշխատանքներ էին ընթանում հիմնական օրենքի մշակման ուղղությամբ:

ԼՂՀ քաղաքացին համաձայն ՏԱ օրենքի իրավունք ունի իրեն հետաքրքրող տեղեկատվության համար (բացի օրենքով նախատեսվածներից) դիմել ցանկացած մարմնի՝ Ապելին, տեղեկատվության տիրապետողները, այսինքն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջեից ֆինանսավորվող կառույցները, ինչպես նաև հասարակական նշանակության կազմակերպությունները պարտավոր են տարեկան մեկ անգամ ՁԼԴ-ում տեղեկատվություն հրապարակել իրենց աշխատանքի, բյուջեի, հաստիքագրության հասարակական միջոցառումների, քաղաքացիների ընդունելության ժամերի մասին տեղեկատվությունների ցանկը, որոնց տնօրինում է տվյալ հիմնարկը, ինչպես նաև՝ դրանք քաղաքացիներին տրամադրելու կարգը, զանգվող վճարի չափերը և մեթոդները հիմքերը:

Հարցաբանողում ուղարկող քաղաքացին պարտավոր չէ հիմնավորել իր հարցումը, բայց նա պետք է ստորագրի հարցաբանման տակ՝ բոլոր կանոնների համաձայն: Ի դեպ, մինչև ար օրենքի ընդունումը, Լեռնային Ղարաբաղում դիմումը ներկայացնելու պայմանները սահմանվելու էին «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները, զանգահանները քննարկելու կարգը մասին» ԼՂՀ օրենքով: Վերջինիս համաձայն, քաղաքացու դիմումին ներկայացվող պահանջների բացակայության դեպքում այն ստացած մարմինը կարող է ընդհանրապես չաշխատասանել նույնիսկ ոչնչացնել: Կամ, նույն օրենքի 9-րդ հոդվածը անհիմն երկարաժամկետ պայմաններ և առաջադրում, ասենք 15 օրվա ընթացքում պատասխանել դիմումին, իսկ եթե անհրաժեշտ է կատարել ստուգումներ՝ ապա մեկ ամիս ժամանակ է անհրաժեշտ: Եվ չնայած այս բովանդակ մեծությամբ, քաղաքացիների դիմումները մնում էին անպատասխան: Կամ միանգամայն անսպասելի է, երբ մեծելու դեպքում պաշտոնյայի պարտավորությունն է հիմնավորել մեծությամբ Սա մեծամասամբ անիրական երևույթ էր Արցախում: Եվ առհասարակ, այս օրենքում յուրաքանչյուր ձեռակերպում, ցանկացած դրույթ աննկատ էր մնում:

ՏԱ օրենքը վկայում է, որ պաշտոնյան կարող է հրաժարվել տեղեկատվություն տրամադրելուց, եթե մատնաշի այն իրական վնասը, որ կծագի պահանջվող տեղեկատվություն

հրապարակման արդյունքներում: Կարևորը հետևյալն է՝ ի՞նչ կլինի, եթե տրամադրվի, քացախայտվի տեղեկությունը: Ի՞նչ վնաս կլինի: Կարծում ենք՝ սա է կարևորը:

Եւս մեկ կարեւոր հանգամանք: ՏԱ օրենքով ԼՂՀ քաղաքացիները իրավունք են ստանում պահանջել փաստաթղթերի պատճենները, եւ ոչ թէ միայն դրանցում պարունակվող տեղեկատվությունը: Իսկ եթե պաշտոնյան հրաժարվում է տեղեկություններ տալ, ապա օրենսդրությունը պետական պատժամիջոցներ է նախատեսում այդ պահանջները խախտելու համար:

Այսպիսով, օրենքի հիմնական առավելություններն են.

Առաջին հերթին, Արցախում քաղաքացիների տեղեկատվական իրավունքը ապահովում է այդ օրենքը, որը կարգավորում է տեղեկության տնօրինողից տեղեկատվություն ստանալու մոտեցիկությունը: Սույն օրենքը համապատասխանում է միջազգային չափանիշներին, այդ թվում՝ մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրին: Բացի դրանից հստակ որոշված են այն կառույցները, որոնք այս օրենքի կոնտենստում հանդիսանում են տեղեկատվության իշխողներ, որոնք մեծ պարտավորություններ են ստանձնել: Դրանք են՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող պաշտպանություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք»: Ուշադրության արժանի է նաեւ այն փաստը, որ առաջին անգամ հայկական օրենսդրության մեջ մտցվել է «հանրային նշանակության կազմակերպություն» հասկացությունը: Սույն հոդվածում վկայակոչվում են այն ոչ պետական կազմակերպությունները, որոնք հանդիսանալով շուկայում գերիշխող՝ ներկայացնում են հասարակական ծառայություններ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալ ապահովագրության, տրանսպորտի, կապի եւ կոմունալ ոլորտներում: Փորձագետների կարծիքով այս որոշումը բավականին արդարացի է եւ ներառում է այն ոլորտները, որոնք պարտավոր են մուտք ապահովել դեպի հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն:

Զնայած նրան, որ ՏԱ օրենքի ընդունումը մեծ առաջընթաց է, սակայն թերությունները եւս առկա են նույն օրենքում: Դրանց մեջ ոչ արդարացիված սահմանափակում է բանավոր հարցումի պատասխանը տրվելու ժամանակը: Այսինքն, պատասխանը տրվում է միայն այն դեպքում, եթե պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարեբրին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին սպառնացող վտանգը: Կամ շատ զգուշացված են հաջորդ կետերը այն մասին, թե «անհրաժեշտ է, ճշտել տեղեկատվության տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը», կամ թե «անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների կարգը»: Սրանով եւ սահմանափակված է բանավոր հարցումի շրջանակը: Սակայն ընդգծենք, որ գործնականում, օրինակ, հաճախ է պատահում շտապ ստուգել կամ ստանալ որեւէ փաստ, թիվ կամ այլ տվյալներ: Պարզվում է, որ նման դեպքերում պետք է դիմել գրավոր ձևով եւ միայն 5 օր սպասելուց հետո ակնկալել ինչ-որ բան: Արդյունքում խոչընդոտներ են ստեղծվում լրագրողների օպերատիվ աշխատանքների համար: Կարծում ենք արդարացիված չէ այդ ժամկետը: Ավելացնենք, նույն հոդվածը սահմանում է. «Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում 5-օրյա ժամկետում»: Մի՞թե տեղեկատվություն տնօրինողին սահմանափակված է 5 օր՝ միայն ճշտելու հրապարակված լրատվամիջոցի տեղը կամ հրապարակման ժամկետը: Մտածելու տեղիք է տալիս այն, որ տեղեկատվության տրամադրման ժամկետը կարելի է տեղափոխել ծանրագույն դեպքում մեկ օրվա ինտերվալում:

Օրենքը նաեւ տեղեկատվության տրամադրման դեպքում նախատեսում է վճարների գանձում: Ընճար չի գանձվում միայն օրենքով սահմանված մի քանի դեպքերում:

Ուսումնասիրման ենթակա են նաեւ օրենքում առկա տեղեկատվության ազատության սահմանափակումները: Սովորաբար իշխանությունները սահմանափակում են այնպիսի տեղեկատվություն, որն իրենց կարծիքով է կարեւոր, որ հասարակությունը չիմանա: Որոշակի տեղեկատվություն սահմանափակելու կառավարության պարտականությունը չպետք է շփոթել հասարակության կամ լրատվամիջոցների ներկայացուցիչներին առանց օրինական հիմքի տեղեկատվությունը չտրամադրելու կառավարության ծնական պայմանականությունների հետ, մի երեւույթ, որ շատ հաճախ է պատահում լրագրողաշխան պրակտիկայում:

Հարկ ենք համարում փաստել, որ Լեռնային Ղարաբաղում տեղեկատվության մատչելիությունը սահմանափակվող այն գաղտնիքները, որոնք տեղ են գտել ՏԱ օրենքում, դրանց

կարգավորման շուրջ միայն ու միայն օրենքի սահմաններում պիտի լուծվի» կարելի է «-ի եւ «չի կարելի»-ի խնդիրը: Այսինքն, ԼՂՀ-ում պետք է ստեղծել պատասխանատու մարմիններ եւ պատասխանատու մարդիկ, որոնց պիտի իրավունք վերապահվի՝ քննարկումներից հետո որոշել, թե որ տեղեկատվությունն է պարունակում պետական գաղտնիք, պետք է հստակ սահմանել պետական գաղտնիքների ցանկը: Է՛ս նորմալ պրակտիկա է, բոլոր երկրներում: ՀՀ պարագայում ՀՀ օրենսդրությամբ սահմանված են պետական գաղտնիք հասկացությունը, նրա պահպանման պահանջները եւ պատասխանատվության հիմքերը: Անհրաժեշտ է ոչ թե ՀՀ պետական գաղտնիքների ցանկը կրկնօրինակել, այլ պետք է ԼՂՀ պայմաններին համապատասխանեցնել, որպեսզի գերծ մնան չարաշահվող բնագավառների մասին տեղեկությունների գաղտնիք պահելուց: Կան ներքաղաքական խնդիրներ, որոնց մասին Վարաբաղի իշխանությունները պիտի խոսեն, տեղեկացնեն, ու դա չի վնասելու երկրի ընդհանուր եւ տնտեսական քաղաքականությանը: Այլ կան հարցեր, որոնց քարծրագույնը իսկապես վնասում է պետական շինարարությանը: Այլ խնդիր է, որ սահմանափակումներում հաշվեկշիռը պետք է փորձել պահել: Այսինքն՝ Արցախի ժողովուրդը պետք է իմանա, թե ինչ է արում եւ ինչպես է աշխատում երկրի ղեկավարությունը տարբեր ոլորտներում, եւ միեւնույն ժամանակ, չպիտի վտանգվի պետական շինարարության գաղափարը: Այսպիսով, անհրաժեշտ է միջազգային օրենքների հիման վրա եւ ինֆորմացիոն դոկտրինայի վրա խնդիրը տեղայնացնելով եւ ԼՂՀ ռեալ իրավիճակը հաշվի առնելով՝ ստեղծել եւ մշակել համապատասխան մարտավարություն:

2002-2005թթ. ԼՂ-ում օրենսդրորեն դրվել է իրավունքի սահմանագիծը, ասել է թե՛ «կարող ես» ու «պարտավոր ես» հասկացությունների սահմանագիծը: Եթե ԼՂՀ-ի ներսում ստեղծվում են նորմալ պայմաններ, հաղթահարել ներքին սպառնալիքները՝ ավելի հեշտ կլինի արտաքին տեղեկատվական պայքարում: Բաղաբաղական հասարակության ստեղծումը հնարավոր է միայն քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի գոյությամբ:

ՏԱ ԼՂՀ օրենքի ընդունումը կմառ լով թղթերի փաթեթ, եթե հանրությունը տեղ չկանգնի տեղեկություն ստանալու իր իրավունքին, թիկունք չկանգնի լրագրողներին եւ լրատվամիջոցներին: Վարաբաղի հասարակությունը պետք է չափնի, որ իր միջոցով, իր թե իսկ իսկ համար սահմանափակվեն այդ իրավունքը, չափնի. որ լրագրողների իրավունքները նա սահմանափակվեն: Եթե հանրությունը զիջեց այս հարցում, ապա զիջելու է մյուս բոլոր հարցերում, կորուսվելու է նորմալ երկրում նորմալ պայմաններով ապրելու իր երազանքը (վկա՝ շատ երկրների փորձը): Որովհետեւ անտեղյակ մարդուն հեշտ է խաբել, հեշտ է կառավարել: Մարդը իրավունք ունի իմանալ, թե ինչ է կատարվում իր երկրում, իմանալ ամբողջ ճշմարտությունը: Միայն այսպես կարող է դարաբաղցին, անհատը վերաճել քաղաքացու, իր երկրի տիրոջ: Այլ այս հարցում լրագրողն ու լրագրողական կազմակերպությունները՝ նրա հավատարիս բարեկամներն են, այլ պահանջարկների ձեւավորման գործում, անշուշտ, անեվիր ունեն:

Գրականություն

1. Պաշտոնական տեղեկագիր, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երեւան, 2006:
2. Պաշտոնական տեղեկագիր, ԼՂՀ Սահմանադրություն, 2006:
3. Ը. Է. Դոդոյան, Սահմանադրությունը մամուլի ազատության նրաշխավոր, Երեւան, 2001:
4. Ա. Անդրեասյան, Տեղեկացնելու իրավունք, Տեղեկատվական իրավունք, Երեւան, 2003-2004:
5. «Ընտ» (Ազատ Արցախ), «Լուսինյանակերտ» թերթեր (2002-2006):
6. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Խտնրնյուս, Երեւան, 2002-2004:
7. Տեղեկատվություն. մարդ, իրավունք, «Թիմ» ուսումնասիրությունների կենտրոն, Երեւան, 2005:
8. Ջանգվածային տեղեկատվության բնագավառը Լորդալայի խորհրդի փաստաթղթերում, ԵԱՀԿ, 2003:
9. Гармонизация законодательств стран южного Кавказа в области СМИ с европейскими стандартами, 2004.
10. Տեղեկատվություն, մարդ, իրավունք, Երեւան, 2005:

*Երեւանի Պետական Համալսարանի Ժողովրդագրության ֆակուլտետի
Մամուլի տնտրության եւ պատմության ամբիոն*